Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Արտիմետի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Քիմիա» (15 դասաժամ) առարկայի ուսուցչի թափուր տեղի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափսի,

2.բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3. անձը հաստատող փաստաթուղթ,

4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),

5.ինքնակենսագրություն (Ձև 5),

6. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025 թ. հունվարի 22-ից մինչև փետրվարի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 17:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից :

Մրցույթը կկայանա 2025թ. փետրվարի 7-ին ժամը 15-00-ին ՝ Արտիմետի միջնակարգ

դպրոցում, հասցեն՝ Արմավիրի մարզ, գ. Արտիմետ Չարենց 45:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093475772 հեռախոսահամարով: